«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Հետազոտության հարցը՝ Ինչպե՞ս են Շիրվանզադեի «Քառս» վեպում ծագած ընտանեկան կոնֆլիկտները ընկալվում աշակերտների կողմից

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Ալլա Ալբերտի Գևորգյան

Ուսումնական հաստատություն՝ Հովհ. Իսակովի անվան թիվ 132 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……...3

ԳԼՈՒԽ 1. ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.1. Ընտանիք հասկացությունը: Ընտանիքի կառուցվածքը, հիմնական գործառույթները.....…….....……5

1.2. Ընտանեկան կոնֆլիկտների հիմանական պատճառները, դրանց նպաստող հանգամանքները և գործոնները.....6

ԳԼՈՒԽ 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

2.1. Ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը երեխաների դաստիարակության և անձի ձևավորման վրա….....……...8

2.2.Շիրվանզադեի «Քառս» վեպի ընտանեկան փոխհարաբերությունների ազդեցությունը աշակերտների հոգեբանության ձևավորման գործընթացում.....10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….……15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ…….…...17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<u>Թեմայի արդիականությունը:</u> Ընտանիքի ստեղծումն ու պահպանումը համարվում է կյանքի կարևորագույն արժեքներից մեկը, սակայն, ցավոք, ոչ բոլորն ունեն բավականաչափ համբերություն և իմաստություն ընտանեկան խնդիրները խաղաղ ճանապարհով լուծելու համար:

Ընտանեկան խնդիրներն ազդում են ոչ միայն ամուսինների փոխհարաբերությունների, այլև երեխաների զարգացման և բնավորության գծերի ձևավորման վրա: Հասուն տարիքում շատերը չեն հիշում իրենց մանկության տարիների տրավմատիկ իրադարձությունները, սակայն այդ ամենը, անկասկած, հետք է թողնում մարդու հետագա կյանքի վրա:

Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ: Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ: Աշխատանքում նկարագրված են ընտանեկան կոնֆլիկտների տեսակները, դրանց առաջացման պատճառները և դրանց բացասական հետևանքները երեխայի անձի ձևավորման վրա:

Նշյալով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

<u>Հետազոտության նպատակը</u> և <u>խնդիրները:</u> Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել ընտանիքի հոգեբանությունը, ընտանիքում կոնֆլիկտների ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ *խնդիրները* '

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
- Ներկայացնել ընտանիքի հոգեբանությունը:
- Պարզաբանել ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները:

- Լուսաբանել ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը երեխաների դաստիարակության և անձի ձևավորման վրա:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից, որոնք իրենց հերթին բաղկացած են ենթագլուխներից, հետազոտական աշխատանքից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.1. Ընտանիք հասկացությունը: Ընտանիքի կառուցվածքը, հիմնական գործառույթները

Ընտանիքը հասարակության տարրական բջիջ է, որը կազմված է մարդկանց փոքր խմբից: Ընտանիքը ձևավորվում է կնոջ և տղամարդու ամուսնությունից, որոնք ունեն նույն կենցաղը, ձգտում են ունենալ դաստիարակված, կրթված և հասարակությանը պիտանի երեխաներ: Յուրաքանչյուր ընտանիք կազմված է անդամներից, ինչպես նաև նրանց միջև գոյություն ունեցող կապերից ու փախհարաբերություններից: Այդ ամբողջությունն էլ ընտանիքի կառուցվածքն է:

Հայերիս համար ընտանիք հասկացությունը շատ ավելի նվիրական նշանակություն ունի, քանի որ դարեր շարունակ այն եղել է մեր ազգային արժեքների ու ավանդույթների պահպանման ինքնատիպ միջավայր, որտեղ դաստիարակվել են ազգային արժեքներ դավանող մեր սերունդներն ու իրենց ստացածը հետագայում նույն ձևով փոխանցել հաջորդ սերունդներին: Եվ հենց դա է եղել մեր ազգի հարատևման ամենակարևոր գրավականը: Կայուն ընտանիքն է յուրաքանչյուր երկրի զարգացման առաջին օղակն ու ամենակարևոր գործոններից մեկը: Ի վերջո, ինչպես ասել է մեծ գրող Մուրացանը, «ամուր է այն ազգը, որն ունի ամուր ընտանիք»:

Դեռևս 19–րդ դարում հայ մեծանուն վիպասան Ալեքսանդր Շիրվանզադեն երբ ուսումնասիրում էր կապիտալիստական Բաքվի կյանքը իր նավթաշխարհով, գրում է.

«Գոյացել էր մի այլանդակ քաոս, ուր սերը դեպի ոսկին ջնջել ու անհետացրել էր լույսը խավարից, բարոյականն անբարոյականից զատող բոլոր գծերը: Այստեղ էր, որ տեսա գայլի ախորժակով, վագրի ժանիքներով զինված բարեկամին՝ բարեկամի դեմ, եղբորը՝ եղբոր դեմ, որդուն՝ հոր դեմ: Դրսից դիտողին թվում էր, թե ընկել է մի գազանանոց, ուր ամենքը անոթությունից կատաղել են և պատրաստվում են իրարու կոկորդ կրծոտել: Չկար մի շրջան, ուր մարդ կարողանար կես ժամ ազատ շունչ քաշել...
...Միջավայրը արտաքուստ փայլուն էր, ներքուստ՝ այլանդակ ու ծայրաստիճան վտանգավոր»[1]:

[1] Մկրտչյան Վ., Շիրվանզադեի ռեալիստական արվեստի մի քանի բնորոշ գծերը, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1959, N 1:

Եվ վերջապես 15 տարի բարդ ու լարված աշխատանքից հետո 1896-97թթ-ին Շիրվանզադեն գրում է իր հանրաճանաչ «Քառս» վեպը, որի գործողությունները տեղի են ունենում 19 -րդ դարի վերջին՝ Բաքվում:

1.2. Ընտանեկան կոնֆլիկտների հիմանական պատճառները, դրանց նպաստող հանգամանքները և գործոնները

Կոնֆլիկտը, որպես «մարդկային պատմության մշտական գործոն», ընկած է աշխարհի զարգացման հիմքում: Ցանկացած հասարակության պատմություն կոնֆլիկտների պատմություն է, որը ուղեկցվում է հոգեբանական սթրեսով, նյութական, մշակութային, մարդկային կորուստներով:

«Կոնֆլիկտ» տերմինը գալիս է լատիներեն «conflictus» («բախում») բառից: Կոնֆլիկտը այն իրավիճակն է, որի ժամանակ մի կողմի (անձ, խումբ, կոլեկտիվ) վարքը խոչընդոտում է մյուս կողմի շահերի իրականացմանը՝ դրդելով պատասխան ռեակցիա: Համաձայնության բացակայությունը խոչընդոտում է կողմերից մեկի նպատակների իրականացմանը և, հետևաբար, այն ձգտում է խանգարել հակառակորդին իր պլանները ոչնչացնելուց[2]:

Ընտանեկան կյանքը մի ամբողջ գիտություն է, որը շատ բարդ է և անընդհատ զարգացող, քանի որ երկու ճակատագրեր միացել են և դարձել ընդհանուր երկու աշխարհներ: Անհրաժեշտ է ապրել ընդհանուր հոգսերով, հաջողություններով[3]:

Ընտանիքի յուրահատկություններից մեկն այն է, որ մի քանի մարդ ամենասերտ փոխհարաբերությունների մեջ են լինում երկարատև ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Նման ինտենսիվ փոխազդեցության համակարգում դժվար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների, և ճգնաժամերի: Ընտանիք կազմելուց հետո սկսվում է ամուսնական առօրյան իր հոգսերով, ամուսինների միջև կարող են առաջանալ նաև հակասություններ, կոնֆլիկտներ, որոնք առաջ են բերում ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերություններ: Այդ կոնֆլիկտները կարող

---

[2] Эйдемиллер Э. Г., Психология и психотерапия семьи, Э. Г. Эйдемиллер, В. Юстицкис, 4–е изд, СПб., Питер, 2008, стр. 672.

[3] Բաբլոյան Ա., Կոնֆլիկտի կարգավորումը և բանակցությունները, Երևան 2004

են վերաբերվել ամուսնական կյանքի տարբեր կողմերին, դրամի, հետաքրքրություններին, բարեկամներին, ազգականներին, երեխաներին և այլն: Ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերությունների առաջացման հիմնական և ավելի հաճախ հանդիպող պատճառներից մեկը կոնֆլիկտներն են ընտանիքի անդամների միջև: Ընտանիքի անդամների միջև միշտ առկա է պայքար հանուն իշխանության, հանուն որոշումներ կայացնելու իրավունքի[4]:

[4] http://saveamarriage.com/marital-problems.htm

ԳԼՈՒԽ 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

2.1. Ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը երեխաների դաստիարակության և անձի ձևավորման վրա

Անընդհատ ծագող կոնֆլիկտները կարող են բացասաբար ազդել ոչ միայն ամուսնական հարաբերությունների, այլև երեխայի բարոյական և մտավոր զարգացման վրա: Ի վերջո, երեխայի հոգեկանը, նրա հոգեկան պահեստը, ընկալումն ու վերաբերմունքը շրջապատող աշխարհի, այլ մարդկանց և իր անձի նկատմամբ ձևավորվում են նրա տանը տիրող մթնոլորտի ազդեցության ներքո:

Ցանկացած կոնֆլիկտ երեխան կարող է ընկալել որպես սիրո բացակայություն, անգամ օբյեկտիվ քննադատությունը կամ սխալ վարքագծի մատնանշումը՝ ուղղված իր հասցեին: Հետևաբար ծնողների վեճերը սիրո բացակայության, հուսահատության, անպաշտպանության, տագնապի զգացման հիմք կարող են հանդիսանալ: Երբեմն հայրն ու մայրն ուրիշների մոտ ձևացնում են՝ երջանիկ են և հաշտ, իսկ տանը լիովին հակառակ պատկերն է լինում: Ծնողների կողմից հարգանքի կամ սիրո ծայրահեղ տարբերվող ցուցադրությունների դեպքում երեխան ծնողներին վերագրում է անարդարության, ստախոսության հատկանիշներ և կասկածում է ծնողների՝ իր հանդեպ սիրուն, ազնվությանը, նվիրվածությանը, առաջանում է հիասթափություն, և աշխարհի հանդեպ ձևավորում է կասկածամիտ վերաբերմունք: Սա խաթարում է հարաբերությունների կառուցման հմտությունների ձևավորումը, կարող է առաջ բերել շեղվող վարքագիծ:

Երեխայի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա:

Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է: Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ

հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Ընտանիքն ամուր է այն ժամանակ, երբ զույգերի միջև ստեղծված են բարիդրացիական հարաբերություններ, երբ ազատ քննարկվում են տարբեր թեմաներ, երբ ամուսիններն ունեն ընդհանուր հետաքրքրություններ, ընդունակ են ապրումակցման, զիջող են և, ամենակարևորը, երբ ընտանիքի հիմքում սերն է:

Ցանկացած ծնող, հենվելով սեփական փորձի և գիտելիքների վրա, փորձում է չկրկնել ուրիշների սխալները և որքան հնարավոր է ճիշտ դաստիարակել իր երեխաներին: Ընտանիքի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում անհամեմատ մեծ են: Ոչ լիարժեք ընտանիքների երեխաների մոտ հաճախ դիտվում է ինքնուրույնության և շրջապատում ինքնահաստատվելու բարձր ձգտումը[5]:

Ընտանիքում շփման կարիք ունեն նաև երեխաները, ինչը երեխայի անձի ձևավորման գլխավոր գործոնն է: Ընտանիքում երեխաներն առավել շփվում են մոր, քան հոր հետ, քանի որ մայրը նոր սերնդին լույս աշխարհ բերողն է, խնամողը և, այս ամենի հետ մեկտեղ, ունի «հոգևոր» կապ իր սերնդի հետ: Կինն ավելի զգայուն է, էմոցիոնալ, կարեկից, և այդ պատճառով երեխան սերտ կապված է մոր հետ: Իսկ հայրն ուժ է, ընտանիքի հենարան: Նա իր ներկայությամբ երեխային վստահություն է հաղորդում, և կարճ ժամանակով բացակայությունը երեխայի մոտ առաջացնում է վախ, փակվածություն, ագրեսիվություն: Սակայն պատահում է այնպես, որ ծնող-երեխա փոխհարաբերություններում բացակայում է վստահությունը, որն էլ բացասական կերպով է ազդում երեխայի անձի զարգացման վրա: Ծնող-երեխա փոխհարաբերությունը մի ընթացք է, որի ժամանակ ծնողը կենտրոնանում է երեխայի վրա, սատարում նրան դժվար պահերին, օգնում է խուսափել սխալներից:

Սակայն, ամենակարևորը, անհրաժեշտ է երեխային ցույց տալ, որ անհաջողությունը ոչ մի դեպքում չի փոքրացնում նրա անձնային արժանիքները:
Երեխաներն ընտանիքում լրացումներ են, ամուսիններին կապող օղակ: Նրանք բերում են ուրախություն և քաղցր հոգս, որոնք մեծացնում են միմյանց միջև սերը, դարձնում այն

[5] http://www.zangak.am/pdf/hogeb-ev-kyanq-2010-2011/1-2-2010/hog-2010-12.pdf

ավելի խորը: Անկասկած, երեխային պետք են ծնողներ՝ հայր և մայր: Սակայն հուզականորեն տարանջատված երկու անձուրաց կյանքը «հանուն երեխայի» հաճախ հանդիսանում է բարենպաստ ընտանիքի կերպար ստեղծելու փորձ: Չլուծված միջամուսնական պրոբլեմները, որոնք թեև թաքնված են, ազդում են երեխայի վրա:

Ընտանիքը միասնական օրգանիզմ է: Ամենալավ պրոֆիլակտիկան հետևյալն է. ամուսնական հարաբերությունների բարելավում, սեփական պրոբլեմների լուծում: Ձեր ամուսնական և սեփական պրոբլեմները ոչ միայն ձեր անձնական գործն են, այլև ձեր երեխայի զարգացման գործոնը[6]:

Բարձր անհատականացման մակարդակի հասած դեռահասները կարող են մնալ ծնողների հետ ջերմ հարաբերությունների մեջ՝ չզգալով սեփական անհատականացման կորուստը: Ցածր անհատականացման մակարդակով դեռահասներն այնպիսի ընտանիքներից են, որոնց անդամները խուսափում են տարակարծություններից և այն աստիճան են ընդունում ուրիշների կարծիքները, որ այլևս ի վիճակի չեն լինում ընդունել սեփականը[7]:

2.2. Շիրվանզադեի «Քառս» վեպի ընտանեկան փոխհարաբերությունների ազդեցությունը աշակերտների հոգեբանության ձևավորման գործընթացում

Վեպը սկսվում է Մարկոս աղա Ալիմյանի մահվան տեսարանով: Եվ որքան էլ զարմանալի չէ, բոլորին հետաքրքրում է նրա թողած կտակը: Արդյո՞ք ում կհասնի Ալիմյանի թողած հարստությունը, և ո՞վ կտիրանա նրան, քանզի նրա ավագ որդին՝ Սմբատը, ուսանողական տարիներին ապրելով Ռուսաստանում՝ սիրահարվել և ամուսնացել էր ռուս աղջկա հետ, ունեցել երկու զավակ և զրկվել հոր աջակցությունից:

Ալիմյանի միջնեկ որդին՝ Միքայելը, վարում էր «ոսկի երիտասարդության» ցոփ ու շվայտ կյանք, որը նույնպես անհանգստացնում էր Մարկոս աղային:
Իսկ կրտսեր որդին՝ Արշակը, հիվանդ էր անբուժելի հիվանդությամբ:

---

[6] Худоян С. С., К проблеме кризиса развития в позднем возрасте // Психол. журн, 2007, № 4 (16), стр. 54–61.
[7] Haley J., Problem–solving therapy/ J. Haley, San Francisco:Jossey–Bass, 1976, p. 275.
http://zangak.am/pdf/2012-11-28/hog-ev-kyanq-2012-1-2.pdf

Սա իրոք մի քառասային ընտանիք էր՝ իր հոգեբանական և կոնֆլիկտային իրավիճակներով: Կոնֆլիկտային էր կտակի և կոնտր կտակի պահը, իսկ հոգեբանական տեսանկյունից քանդվում էր մի ողջ ալիմյանական հայկական ընտանիք:

Կոնֆլիկտի հասունացման պայմաններում սրվում են երկու եղբոր փոխհարաբերությունները: Միքայելը փողոցում ծեծվում և դանակահարվում է Ալիմյանների փեսա՝ Մարութխանյանի վարձու մարդկանց կողմից: Եվ միայն Շուշանիկի սերն է նրան ետ դարձնում իրական կյանք: Իսկ Սմբատը կործանվում է՝ լի փողի պայմաններում:

Հոգեբանական ծանր վիճակում է նաև Ալիմյանի կինը, ով միայնակ մնալով՝ ոչ մի կերպ չի կարողանում գլուխ հանել իր քառասային ընտանիքից:

Կորչում է սերը, հարգանքը, հավատարմությունը ընտանիքի անդամների միջև, և Ալիմյանի թողած հարստությունը ստեղծում է ծանր կոնֆլիկտ և ահավոր իրավիճակ ընտանիքում:

Այստեղ նորից պետք է խոսենք ծնող և երեխա, եղբայր և քույր, մայր ու աղջիկ և վերջապես եղբայր-եղբայր միջընտանեկան հարաբերությունների մասին: Միգուցե ո՛չ ծնողն է եղել իր տեղում, և ո՛չ էլ՝ զավակները: Հարստությունը կուրացրել է աղա Ալիմյանին՝ մոռացնել տալով մի կարևոր երևույթ՝ ընտանիքը, որտեղ բոլորն էին աչքաթող արված ծնողի կողմից:

Կյանքն ապացուցել է, որ այդպիսի ընտանիքները լինում են կոնֆլիկտային և հոգեբանական ծանր տվյալներով, որտեղ բոլորը իրար ատում են և հեռանում միմյանցից: Հայրը թողնելով մեծ հարստություն՝ ժառանգության կոնֆլիկտ է ստեղծում առանց այն էլ քայքայված ընտանիքում:

Դասարանում հարկավոր է ստեղծել բանավեճ թեմայի շուրջ և տալ հնարավոր լուծումներ:

- Ճիշտ փոխհարաբերություններ ընտանիքում,
- Հին և նոր սերունդների բախում,
- Տարիքային հարաբերություններ,
- Կոնֆլիկտներ և հոգեբանական իրավիճակներ:

Դասին տրամադրված ժամանակի ընթացքում փորձում ենք վերլուծել կարևոր կերպարները՝

- Մարկոս աղա Ալիմյան
- Սմբատ
- Միքայել
- Մարութխանյան
- Շուշանիկ և Անտանինա Իվանովնա:

Հարցեր.

1. Ի՞նչ կատարվեց Ալիմյանի մահից հետո իր ընտանիքում:
2. Ի՞նչը փոխեց Սմբատին՝ վերափոխվել ու դառնալ անկարող մի անձնավորություն:
3. Ո՞վ փոխեց Միքայելին՝ բռնելու ճիշտ կյանքի ճանապարհ:
4. Ո՞րն էր Մարութխանյանի նպատակը:

Խմբային աշխատանքով բացահայտվում են կերպարներն իրենց յուրահատուկ հոգեբանական հատկանիշներով:

1. Գրատախտակին գրում ենք.

Ի՞նչ տեսա	Ի՞նչ լսեցի
Ի՞նչ իմացա	Ի՞նչ զգացի

Քառաբաժանի մեթոդով ստուգվեց աշակերտների զգացական ընկալումը թեմայի շուրջ:

2. Փորձեցինք նոր վերնագիր տալ վեպին: Ինչու՞ է վեպը կոչվում «Քառս»: Ի՞նչ է քառսը:
3. Կատարեցինք «Քառս» ֆիլմի դիտում (նկարահանված 1973թ. Լայերտ Վաղարշանի կողմից) և քննարկում, ընդհանուր մտքերի շարադրում:
4. Օգտագործեցի Ֆրայերի մոդելը՝ գրատախտակի մեջտեղում գրելով քառս բառը, քանի որ վեպի ամենակարևոր և խորը իմաստը թաքնված էր այդ մեկ բառի մեջ:
5. Հաջորդ դասին կատարեցինք խմբային աշխատանք (5 խումբ) հարցաթերթիկների միջոցով:

I խումբ՝ Ալիմյանի ավագ որդին:

II խումբ՝ Ալիմյանի կրտսեր որդին:

III խումբ՝ Ալիմյանի միջնեկ որդին:

IV խումբ՝ Բաքուն 19–րդ դարում:

V խումբ՝ կանանց դերը վեպում:

Կատարեցինք նաև ամփոփում հարցերի միջոցով:

1. Ծանո՞թ եք նման դեպքի, երբ փողը սրում է մարդկային հարաբերությունները:
2. Զգացմունքային հարց.
   Ինչպե՞ս փոխվեցին վեպի հերոսները սիրո և քնքշանքի, ծանր հոգեվիճակից դեպի նորմալ մարդկային հարաբերությունների վերականգնում և նոր կյանք:
3. Մտքի հարց.
   Ի՞նչը կործանեց Սմբատին:
4. Ո՞րն էր «Քաոսի» հիմնական գաղափարը:

Հետազոտական աշխատանքի միջոցով ստացված տվյալները մեկնաբանեցինք, որոնք ավելի աշխույժ և կենդանի դարձրեցին հետազոտական աշխատանքը:

Աշակերտներն իրենց խոսքը սկսեցին Ալեքսանդր Շիրվանզադեի «Քաոս» վեպի վերնագրի մեկնաբանումից, այնուհետև ընտանիքի կործանման հասցրած այս մեկ նախադասությունից. «Մարկոս աղա Ալիմյանը ծանր հիվանդ էր»:

Անցում կատարվեց դեպի ժամանակի Բաքվի նավթարդյունաբերություն, բանվորների ծանր ու դժվար աշխատանք:

Կարևոր է, որ վեպի ավարտին աշակերտները հասկացան փողի կործանարար ուժի մասին: Հետազոտական աշխատանքի միջոցով աշակերտը արժևորեց իր սեփական թանկ ընտանիքն ու ընտանիքի անդամներին: Մոր մեծահոգությունը իր զավակների նկատմամբ և իրավիճակը ճիշտ դատելու ունակությունը դուրս բերեց ընտանիքը կործանումից:

Հետազոտությունը տվեց իր արդյունքները: Աշակերտները օգտվելով մեթոդական տարբեր հնարներից, եկան հետևյալ եզրահանգման, որ ընտանիքը կարևորագույ արժեք է մարդ-քաղաքացու ձևավորման գործում:

«Քառս»-ը հայ գրող Ալեքսանդր Շիրվանզադեի սոցիալական ռեալիստական վեպն է: Հիմնված է իրական փաստերի վրա: Առանձին գրքով լույս է տեսել 1898 թվականին: Վեպի գործողությունները տեղի են ունենում Բաքվում, 19-րդ դարի վերջին՝ մի նշանավոր գերդաստանում ծագած խռովության շուրջ:

Վեպը գրելու ընթացքում Շիրվանզադեն մի քանի անգամ լինում է Բաքվում՝ նավթաշխարհի իր տպավորությունները ստուգելու և թարմացնելու[8]:

«Քառս» վեպի ամբողջականությունը դրսևորվում է ոչ միայն երկի թեմատիկայի, այլև նրա գործողության հիմքում ընկած գլխավոր կոնֆլիկտի մեջ: Վեպում արտացոլվում է կյանքը՝ իր բազմազան հակասությունների բարդ ցանցով, անհրաժեշտ օրինաչափություններով և հանկարծակի պատահականություններով, հերոսների արտաքին ու ներքին բախումներով:

Ըստ Ս. Հակոբյանի՝ «գլխավոր կոնֆլիկտը պայմանավորված է բարոյական, հարազատական զգացմունքների կատարյալ բացակայությամբ և դրամասիրության հիվանդագին, հրեշավոր արտահայտությամբ»: Շիրվանզադեի վեպում Հ. Թամրազյանը գլխավորը համարում է սոցիալական հակասությունները: Տարբերակում է ընտանեկան և սոցիալական կոնֆլիկտները:

Վեպում կոնֆլիկտը բազմաճյուղ է, սակայն բոլոր կոնֆլիկտները հավասար հարթության վրա դրված չեն: Գլխավոր կոնֆլիկտը սոցիալական տարբեր խավերի հակասություններն են, սոցիալական կոնֆլիկտը, որը ներգործում է ընտանեկան կոնֆլիկտի վրա: Գլխավոր կոնֆլիկտի ու մյուս կոնֆլիկտների կապի բացահայտումը նպաստում է վեպի գաղափարական իմաստի ընկալմանը:

[8] Հակոբյան Ս., Շիրվանզադե, Թիֆլիս, 1911:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով սույն ավարտական աշխատանքը, հետազոտության և վերլուծության արդյունքների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները, որ ընտանիքն այն առաջին միջավայրն է, որտեղ աճում, զարգանում և դաստիարակվում է երեխան, ուստի նաև այստեղ են այն առաջին դպրոցն ու ուսուցիչները, որտեղ և ում օգնությամբ նա սովորում է ապրել: Երեխայի կյանքի յուրաքանչյուր փուլում ընտանիքի դաստիարակչական գործառույթը շատ կարևոր է: Առողջ ընտանիքներում հարաբերությունները սերտ են ու անմիջական, ընտանիքի անդամները մշտապես կապի մեջ են, հաճախակի են շփվում, լավ գիտեն միմյանց, ներընտանեկան հարաբերություններն առավել հավասարակշռված են և ներդաշնակ: Հատկանշական է անբարենպաստ ընտանիքների առկայությունը:

Աշխատանքում առաջ է քաշվել հետևյալ վարկածը. եթե ընտանիքում հաստատված են աններդաշնակ հարաբերություններ երեխաների և ծնողների միջև, ապա դա կարող է երեխաների մոտ վարքային խանգարումների բերել, ինչը իր հերթին կարող է պայմանավորել երեխայի անձի ձևավորման որոշակի խանգարումներ:

Հետազոտական աշխատանքների ընթացքում վեր հանված խնդիրները հաշվի առնելով՝ առաջարկում ենք իրականացնել հետևյալ քայլերը՝

- Առաջինը պետք է հրատապ բացահայտել անբարենպաստության պատճառները:
- Ծնողները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն երեխայի դաստիարակությանը, ավելի շատ ժամանակ տրամադրեն նրան, որպեսզի երեխայի մոտ չձևավորվի թշնամական վերաբերմունք, ագրեսիվություն հասարակության նկատմամբ:
- Ոչ լիարժեք ընտանիքներում պետք է ստեղծել պայմաններ, որպեսզի երեխան իրեն զգա սիրված և պահանջված, ընդգծվի նրա կարևորությունը:
- Անբարենպաստ ընտանիքներում պետք է պահպանել հոգեբանական համատեղելիություն ծնողների միջև, որը պայմանավորում է ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտը:

- Ընտանիքում պետք է սերմանել երեխայի հանդեպ սիրո և հարգանքի դրսևորում, երեխաների ազատ ժամանակի արդյունավետ օգտագործում և այդ աշխատանքների մեջ ծնողների ներգրավում:
- Եթե ընտանիքների խնդիրները հնարավոր չէ լուծել ընտանիքի ներսում, ապա անհրաժեշտ է մեկ մասնագետի, մեկ ծրագրի օգնություն կամ հատուկ մասնագիտական խմբի կոորդինացված աշխատանք:
- Պետք է հետևել դպրոցներում ուսուցիչների վերաբերմունքին երեխաների հանդեպ:

Ընտանեկան կոնֆլիկտները դատավճիռ չէ, այն կարելի է հաղթահարել և երբեք չվերադառնալ դրան, սակայն շատ կարևոր է, որ ընտանիքի յուրաքանչյուր անդամ դա գիտակցի և սեփական մաս նակցությունն ունենա իր ընտանիքի «վերափոխման» գործում, քանզի սոցիալական մանկավարժներն ու մանկավարժները միայն օգնում են, բայց ոչ երբեք՝ լուծում և վերացնում խնդիրը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աշիկյան Արմինե, Ընտանիքը երեխայի անձի ձևավորման և զարգացման սոցիալ-մշակութային միջավայր
2. Բաբլոյան Ա., Կոնֆլիկտի կարգավորումը և բանակցությունները, Երևան 2004
3. Զացեպին Վ.Ի., «Ընտանիքի հոգեբանություն» էջ 19:
4. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն. Երևան: Ուրարտու համալս., 2010, 456 էջ:
5. Էյդեմիլլեր Է.Գ., Վ. Յուստիցկիս, Ընտանիքի հոգեբանություն և հոգեթերապիա, էջ 39:
6. Թամրազյան Հ., Ա. Շիրվանզադե, Կյանքը և գործը, Երևան, 1978:
7. Հակոբյան Ս., Շիրվանզադե, Թիֆլիս, 1911:
8. Մկրտչյան Վ., Շիրվանզադեի ռեալիստական արվեստի մի քանի բնորոշ գծերը, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1959, N 1:
9. Худоян С. С., К проблеме кризиса развития в позднем возрасте // Психол. журн, 2007, № 4 (16), стр. 54–61.
10. Эйдемиллер Э. Г., Психология и психотерапия семьи, Э. Г. Эйдемиллер, В. Юстицкис, 4–е изд, СПб., Питер, 2008, стр. 672.
11. Haley J., Problem–solving therapy/ J. Haley, San Francisco:Jossey–Bass, 1976, p. 275. http://saveamarriage.com/marital-problems.htm
12. http://zangak.am/pdf/2012-11-28/hog-ev-kyanq-2012-1-2.pdf
13. http://www.zangak.am/pdf/hogeb-ev-kyanq-2010-2011/1-2-2010/hog-2010-12.pdf